



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 1501/02/14
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 1501 /02/14

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

10-ին սեպտեմբերի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/
վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր
Դատավորներ՝

Ա.Հայրապետյանի
Ի.Կարապետյանի
Ա.Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Էրիկ Իվանի Մարտիրոսյանի և Ատոմ Ռոբերտի Մխիթարյանի՝ համապարտության կարգով 2.952.620 ՀՀ դրամ 90 լումա՝ որպես պարտքի ընդհանուր գումար և հաշվեգրված տոկոսներ, բռնագանձելու և ըստ Էրիկ Մարտիրոսյանի հակընդդեմ հայցի՝ ժամկետանց վարկի գումարի և ժամկետանց տոկոսների նկատմամբ հաշվարկված և հաշվարկվող լրացուցիչ տույժերը՝ որպես անհամաչափ, պակասեցնելու պահանջների մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի հուլիսի 10-ի որոշման դեմ հայցվոր /հակընդդեմ հայցով պատասխանող/ «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Տ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1.Գործի դատավարական նախապատմությունը

«Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ նաև «Արցախբանկ» ՓԲԸ կամ Բանկ/ 2014թ. օգոստոսի 21-ին դիմել է դատարան ընդդեմ Էրիկ Իվանի Մարտիրոսյանի և Ատոմ Ռոբերտի Մխիթարյանի՝ խնդրելով համապարտության կարգով բռնագանձել 2.952.620 /երկու միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ 90 /իննսուն/ լումա, որից 2.000.000 ՀՀ դրամը՝ ժամկետանց վարկի գումար, 427.364,40 ՀՀ դրամը՝ ժամկետանց տոկոսագումար, 27.256,50 ՀՀ դրամը՝ ժամկետանց տոկոսների նկատմամբ հաշվարկված տույժ, 498.000 ՀՀ դրամը՝ ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկված տույժ, ինչպես նաև 2014թ. օգոստոսի 14-ից մինչև պարտավորության լրիվ կատարման օրը հաշվարկել չվճարված վարկի գումարի նկատմամբ տարեկան 24 տոկոս տոկոսադրույք և չվճարված վարկի գումարի ու ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0.1 տոկոսի չափով տույժ, հիմնավորելով իր պահանջը նրանով, որ 2011թ. դեկտեմբերի 8-ին Բանկի և Է.Մարտիրոսյանի միջև կնքվել է թիվ AGA-137 «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի համաձայն բացվել է 2.000.000 ՀՀ դրամ գումարի սահմանաչափով վերականգնվող վարկային գիծ՝ 24 տոկոս տարեկան տոկոսադրույքով /վարկային պարտավորությունների ապահովման միջոց է հանդիսացել նաև Բանկի, Է.Մարտիրոսյանի և Ա.Մխիթարյանի միջև 2011թ. դեկտեմբերի 8-ին կնքված երաշխավորության պայմանագիրը/, սակայն պատասխանող Է.Մարտիրոսյանը, խախտելով Պայմանագրի դրույթները, չի կատարել վարկային պարտավորությունները:

Պատասխանող Է.Մարտիրոսյանը, իր հերթին, 2015թ. փետրվարի 11-ին ներկայացրել է հակընդդեմ հայց՝ սկզբնական հայցադիմումով բռնագանձման ենթակա ժամկետանց վարկի գումարի և ժամկետանց տոկոսների նկատմամբ հաշվարկված և հաշվարկվող լրացուցիչ տույժերը՝ որպես անհամաչափ, պակասեցնելու պահանջի մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ /դատավոր Մ.Ավանեսյան/ 2015թ. մարտի 31-ի վճռով վճռվել է. Էրիկ Մարտիրոսյանից, Ատոմ Մխիթարյանից համապարտության կարգով հօգուտ «Արցախբանկ» ՓԲԸ բռնագանձել 2.448.452,6 ՀՀ դրամ, որից՝ 2.000.000 ՀՀ դրամը՝ որպես վարկի գումար, 99.912,3 ՀՀ դրամը՝ վարկի գումարի դիմաց հաշվարկված ժամկետանց տոկոս, 327.452 ՀՀ դրամը՝ ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկված տույժ, 21.088,3 ՀՀ դրամը՝ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկված տույժ: Վճռվել է նաև չվճարված ժամկետանց վարկի գումարի և չվճարված ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ, սկսած 2014թ. օգոստոսի 14-ից մինչև պարտավորության լրիվ կատարման օրը, հաշվարկել տույժ՝ տարեկան 24 տոկոս տոկոսադրույքով:

Բանկի հայցը մնացած մասով մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ /նախագահող՝ դատավոր Հ.Գրիգորյան, դատավորներ՝ Ն.Գրիգորյան, Կ.Սաղյան/, Բանկի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով վճիռը, 2015թ. հուլիսի 10-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2015թ. օգոստոսի 4-ին «Արցախբանկ» ՓԲԸ բերել է վճարելի բողոք, որը Գերագույն դատարանի 2015թ. հուլիսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

1/ Վերաքննիչ դատարանն անհիմն է բացասական պատասխանել այն հարցին, թե արդյոք պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո վարկառուի մոտ ծագում է Բանկին տարեկան 24 տոկոս տոկոսադրույքով տոկոսներ վճարելու պարտականություն և եզրակացրել, որ պատասխանողը պայմանագրով սահմանված ժամկետում վարկի գումարի նկատմամբ հաշվեգրվելիք տոկոսագումարները վճարելու պարտականություն չի կրում:

Ըստ բողոքի՝ մինչև պարտավորության փաստացի մարման օրը տարեկան 24 տոկոս տոկոսադրույքով տոկոսներ հաշվեգրելու ու գանձելու մասին պահանջը հիմնավորված է և ենթակա է բավարարման: Կողմերի միջև կնքված Պայմանագրի 5.1 կետով սահմանված է, որ պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը: Դա նշանակում է, որ Պայմանագրի գործողության ժամկետ սահմանված չէ, քանի որ Պայմանագրի 5.1 կետի համաձայն Պայմանագրի բոլոր կետերը գործում են երկու կողմերի համար մինչև պարտավորությունների լրիվ կատարումը: Ուստի, մինչև պարտավորությունների փաստացի մարումը 24 տոկոս տոկոսագումար հաշվեգրելու Բանկի պահանջը միանշանակ հիմնավոր է: Այսինքն՝ պարտքի մնացորդային արժեքի վրա 24 տոկոս տոկոսադրույքով տոկոս վճարելու պարտականությունը, ինչպես նաև Պայմանագրի 4.1 և 4.2 կետերով սահմանված տույժերը գործում են մինչև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ գումարի մարումը:

2/ Բողոք բերած անձի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը և սխալ պատասխանելով այն հարցին, թե արդյոք է. Մարտիրոսյանի կողմից Բանկին վճարման ենթակա տույժի գումարն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, թե ոչ, գտել է, որ վարկատուի կրած վնասները փոխհատուցելու համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով հաշվարկվող և գանձվող գումարները բավարար են:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ, 372-րդ և 411-րդ հոդվածների բովանդակությունը, բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով տուժանքի չափը որոշվել է պայմանագրով, ուստի դրա գանձման համար անհրաժեշտ չէ ապացուցել վնասների չափը: Տուժանքը վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել, քանի որ տուժանքը վճարվում է պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որն էլ նախատեսված է կողմերի միջև կնքված պայմանագրով, ինչպես նաև տուժանքի վճարումը կապված չէ կողմի հնարավոր վնասներ կրելու հանգամանքի և դրա չափի հետ: Այսինքն՝ արդեն իսկ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վրա է հասնում պայմանագրով

սահմանված կողմերի համաձայնությամբ որոշված տուժանք վճարելու պարտականությունը:

Ըստ բողոքի՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն օրինական տուժանքի չափը կարող է մեծացվել կողմերի համաձայնությամբ, եթե դա արգելված չէ օրենքով: Դատարանը տուժանքի չափը գնահատել է պարտքի գումարի և պարտավորությունը չկատարելու օրերի հարաբերակցությամբ, սակայն դատարանը հաշվի չի առել, որ 2.000.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 498000 ՀՀ դրամ տույժը գումարվել է երկար ժամանակահատվածում՝ շուրջ 249 օրում, ինչպես նաև 99.912,3 ՀՀ դրամ տոկոսագումարի նկատմամբ 27.256,5 ՀՀ դրամ գումարը՝ 321 օրում: Այսինքն՝ տվյալ դեպքում տույժի գումարը ձևավորվել է ըստ հաշվեգրված օրերի քանակի, և տվյալ հանգամանքը պետք է դատարանի կողմից գնահատվեր ակնհայտ անհամաչափության չափանիշը որոշելիս: Ակնհայտ անհամաչափությունը պետք է որոշվի նաև ըստ պարտքի գումարի և տույժի հարաբերակցության:

Բողոք բերած անձը, մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 437-րդ հոդվածի 4-րդ մասը, եզրակացրել է, որ մինչև պարտավորության փաստացի մարման օրը վարկի գումարը պայմանագրով սահմանված ժամկետում չմարելու դեպքում տոկոս հաշվեգրելու, ինչպես նաև վարկի գումարը և տոկոսագումարները չվճարելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար չվճարված գումարի նկատմամբ 0.1 տոկոսի չափով տույժ հաշվեգրելու ու գանձելու մասին պահանջը հիմնավորված է ու ենթակա է բավարարման:

Վերոշարադրյալից ելնելով՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2015թ. հուլիսի 10-ի որոշումը և հայցը բավարարել ամբողջությամբ. պատասխանողներից 2.448.452,60 ՀՀ դրամ գումարի փոխարեն բռնագանձել 2.952.620,90 ՀՀ դրամ, որից՝ 2.000.000 ՀՀ դրամը՝ վարկի գումար, 427.364,40 ՀՀ դրամը՝ ժամկետանց տոկոսագումար, 27.256,50 ՀՀ դրամը՝ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկված տույժ, 498.000 ՀՀ դրամը՝ ժամկետանց վարկի նկատմամբ հաշվարկված տույժ, ինչպես նաև բավարարել մինչև պարտավորության փաստացի մարումը չվճարված վարկի գումարի նկատմամբ տոկոս /24 տոկոս/ հաշվեգրելու, չվճարված վարկի գումարի և տոկոսագումարի նկատմամբ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով տույժ հաշվեգրելու մասին պահանջը և 48.969 ՀՀ դրամի փոխարեն բռնագանձել 59.052,40 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Բանկի և Է.Մարտիրոսյանի միջև 2011թ. դեկտեմբերի 8-ին կնքված «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ AGA-137 պայմանագրով Բանկը պարտավորվել է Է.Մարտիրոսյանի քարտային հաշվին բացել 2.000.000 ՀՀ դրամ սահմանաչափով վարկային գիծ, իսկ վերջինս էլ պարտավորվել է մինչև 2013թ. դեկտեմբերի 8-ը Բանկին վերադարձնել նշված գումարը և վճարել վարկի օգտագործված գումարների նկատմամբ հաշվարկված տոկոսները՝ տարեկան 24 տոկոս տոկոսադրույքով /գ.թ. 10/:

2. Բանկի, Է.Մարտիրոսյանի ու Ա. Մխիթարյանի միջև 2011թ. դեկտեմբերի 8-ին կնքված թիվ AGA-137/1 երաշխավորության պայմանագրով վերջինս՝ որպես

երաշխավոր, պարտավորվել է Բանկի առջև պատասխանատվություն կրել 2011թ. դեկտեմբերի 8-ին կնքված «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» թիվ AGA-137 պայմանագրով Է.Մարտիրոսյանի կողմից ստանձնած պարտավորությունների լրիվ կատարման համար /գ.թ.12/:

3. Պատասխանողները խախտել են պայմանագրերի պայմանները՝ չեն մարել վարկը և դրա նկատմամբ հաշվարկված ու հաշվարկվող տոկոսագումարները:

4. Ըստ Բանկի կողմից տրված տեղեկանքի՝ 2014թ. օգոստոսի 14-ի դրությամբ Բանկի նկատմամբ Է.Մարտիրոսյանի ընդհանուր պարտքը կազմում է 2.952.620,90 ՀՀ դրամ. ժամկետանց վարկի մայր գումար՝ 2.000.000 ՀՀ դրամ, ժամկետանց տոկոսի գումար՝ 99.912,3 ՀՀ դրամ, ժամկետանց տոկոսի նկատմամբ հաշվարկված տույժեր՝ 27.256,5 ՀՀ դրամ, ժամկետանց վարկի նկատմամբ հաշվարկված լրացուցիչ տուգանք՝ 498.000 ՀՀ դրամ, վարկի ժամկետանց մասի նկատմամբ հաշվարկված տոկոս՝ 327.452.1 ՀՀ դրամ: Ընդ որում, վերջին վճարումը կատարվել է 27.09.2013թ. /գ.թ. 15/:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն. բողոքարկված որոշումը՝ վճարման ենթակա տույժերի գումարները՝ ակնհայտ անհամաչափ լինելու պատճառաբանությամբ պակասեցնելու մասով՝ բեկանել և փոփոխել:

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և դատական սխալի առկայության հանգամանքներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված են հետևյալ իրավական հարցերը. ա/ քաղաքացիական իրավունքների սուբյեկտների միջև կնքված պայմանագրի պայմանների իրագործումը, բ/ստորադաս դատարանի կողմից պայմանագրով նախատեսված տուժանքը պակասեցնելու իրավաչափությունը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի քննության կապակցությամբ առաջ է քաշվել նաև վերաքննիչ բողոքում չնշված հիմքը վճռաբեկ բողոքում վկայակոչելու իրավաչափության հարցը:

Գերագույն դատարանը գտնում է, որ.

1/վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 55-րդ հոդվածը հռչակում է. «1.Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները: ...3. Ոչ ոք չի կարող հարկադրվել կրելու պարտականություններ, որոնք սահմանված չեն Սահմանադրությամբ կամ օրենքով»:

Պարտավորությունների կատարմանը նվիրված ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների

բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Պարտավորության խախտման հասկացությունը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածում, այն է՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը:

Ինչպես հետևում է գործի նյութերից, կողմերի միջև կնքված Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

Տվյալ դեպքում Պայմանագրով սահմանված գումարը վերադարձնելու համար ժամկետը լրանալուց հետո /8.12.2013թ./ չվճարված վարկի գումարի նկատմամբ վարկի օգտագործման տոկոսներ հաշվարկելու և վճարելու պարտականություն կրելու պայման նախատեսված չէ, հետևաբար հիմնավոր են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևություններն այն մասին, որ նման պարտավորություն պատասխանողների մոտ չի կարող ծագել: Նման մեկնաբանությունը համահունչ է նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական նորմին:

Բացի դրանից, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել Գերագույն դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Գործի նյութերում առկա վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքում բացակայում է վճարել բողոքում նշված առաջին հիմքի որևէ հիմնավորում, այդ մասով բացակայում է նաև վերաքննիչ բողոքի պահանջը: Հետևաբար, վերը նշված հոդվածի տրամաբանությունից բխում է, որ նշված հարցը չպիտի քննարկման առարկա դարձվեր Վերաքննիչ դատարանում:

2/ Վճարել բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածից /որը սահմանում է պայմանագրի ազատությունը/ և 438-րդ հոդվածից /որը սահմանում է պայմանագրի և օրենքի հարաբերակցությունը/ հետևում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս, որ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Պայմանագրի ազատության սկզբունքը քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է: Այն քաղաքացիական իրավունքի սուբյեկտների համար ապահովում է պայմանագրի կնքման ձևի և պայմանների ընտրություն, բովանդակության ազատ շարադրման հնարավորություն: Սակայն պայմանագրի ազատությունը գործում է միայն օրինականության շրջանակներում: Այդ պատճառով

էլ սահմանվում է, որ պայմանագիրը պետք է համապատասխանի կնքման պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով կողմերի համար սահմանված պարտադիր կանոններին /ԼՂ քաղ. օրենսգրքի 438-րդ հոդված/:

ԼՂ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածը սահմանում է. «1.Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը /վարկատուն/ պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ /վարկ/ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: 2. Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»:

Նշված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են ԼՂ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46-րդ գլխում նախատեսված կանոնները: Նշված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում օրենսդիրը, ելնելով ԼՂ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս վարկային պայմանագիր կնքելիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ԼՂ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով:

Սույն գործով կողմերի միջև կնքված «Քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման» պայմանագիրը վարկային պայմանագրերի տեսակներից մեկն է:

«Պարտավորությունների կատարման ապահովումը» վերտառությամբ ԼՂ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ գլխի 368-րդ հոդվածից հետևում է, որ պարտավորությունների կատարման ապահովման եղանակներին է դասվում նաև տուժանքը:

ԼՂ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանք /տուգանք, տույժ/ է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

Գերագույն դատարանը փաստում է, որ տուժանքը նախատեսվում է որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոց /խախտված իրավունքների վերականգնման ապահովման միջոց/: Տուժանքը պարտավորությունների ապահովման ամենատարածված միջոցն է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված

տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը:

Սույն գործի նյութերով հաստատված է, որ կողմերը Պայմանագրի 4.1 և 4.2 կետերով նախատեսել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատասխանատվության պայմաններ, այն է՝ վարկի գումարը սահմանված ժամկետում չմարելու և սահմանված ժամկետում տոկոսագումարները չվճարելու համար յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարման ենթակա գումարի 0.1 տոկոսի չափով տույժերի վճարում: Այսինքն՝ տվյալ դեպքում կողմերը Պայմանագրով նախատեսել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատասխանատվության միջոցը, հետևաբար ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը սույն գործով կիրառելի չէ, ինչը բխում է նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունից, համաձայն որի 1-ին պարբերությունում նշված տոկոսների հաշվարկի կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Այսպիսով, պատասխանող Է.Մարտիրոսյանը Բանկի հետ պայմանագիր կնքելիս գիտակցել է, որ պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ նրա համար առաջանալու են գույքային անբարենպաստ հետևանքներ:

Քանի որ տուժանքի չափը որոշվում է վաղօրոք՝ օրենքով կամ պայմանագրով, ուստի դրա գանձման համար անհրաժեշտ չէ ապացուցել կրած վնասների չափը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տուժանքի չափը մեծ մասամբ որոշվում է օրենքով: Երբեմն օրենքում իրավունք է վերապահվում տուժանքի չափը սահմանել փոխադարձ համաձայնությամբ կամ փոխադարձ համաձայնությամբ ավելացնել օրենքով սահմանված տուժանքի չափը /ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 371-րդ հոդված/:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է տուժանքը պակասեցնելու իրավական հնարավորություն և դատարանին իրավունք է ընձեռել պակասեցնելու տուժանքի չափը, իսկ տուժանքը պակասեցնելու մասին հարցը որոշելիս դատարանը պետք է նկատի առնի, որ տուժանքի չափը կարող է պակասեցվել միայն այն դեպքում, երբ վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին: Այսինքն՝ օրենսդիրը, հիմնականում չսահմանափակելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը, միևնույն ժամանակ իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապահովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը:

Մեկնաբանելով տուժանքը պակասեցնելու ինստիտուտը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ այդ ինստիտուտը նպատակ ունի զերծ պահել քաղաքացիներին ծանր նյութական վիճակ գցելուց: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու քաղաքացիական իրավունքների սուբյեկտների կողմից իրենց քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը:

Ելնելով վերոգրյալից՝ Գերագույն դատարանը գտնում է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին:

Գերագույն դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ տվյալ նորմը կիրառելի է և՛ օրինական, և՛ պայմանագրային տուժանքների վերաբերյալ, քանի որ օրենսդիրը որևէ սահմանափակում չի նախատեսել դրա կիրառման համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանը առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին: Ակնհայտ անհամաչափությունը պետք է որոշվի նաև ըստ պարտքի գումարի և տույժի հարաբերակցության: Պարտավորության խախտման հետևանքները գնահատելիս կարող են հաշվի առնվել նաև պարտավորություններ, որոնք պարտավորության խախտման հետևանքների հետ ուղղակիորեն կապ չունեն /օրինակ, ապրանքի գինը, պայմանագրի գինը և այլն/:

Սույն գործով Առաջին ատյանի դատարանը հանգելով այն հետևության, որ Բանկին վճարման ենթակա տույժի գումարն ակնհայտորեն անհամաչափ է Է.Մարտիրոսյանի կողմից պարտավորության խախտման համար նախատեսվող հետևանքներին, չի նշել նման հետևությունը հիմնավորող որևէ հանգամանք: Իսկ Վերաքննիչ դատարանն այդ մասով վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, հիմնավոր է համարել վճռում արտահայտած դիրքորոշումը:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանը տուժանքը պակասեցնելու վերաբերյալ իրավական նորմը կիրառել է առանց հաշվի առնելու դրա կիրառման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը: Տուժանքի չափը պակասեցնելը և այն հավասարեցնելը Պայմանագրով նախատեսված տոկոսադրույքին միայն այն պատճառով, որ Պայմանագրով սահմանված տուգանային տոկոսները բարձր են ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափի կրկնապատիկից, անհիմն է: Այդպիսի մեկնաբանությամբ տուժանքի ինստիտուտը կիմաստագրկվի և, հանդիսանալով պարտավորությունների կատարման երաշխիք, չի ծառայի իր նպատակին:

Այսպիսով, սույն գործով ստորադաս դատարանները չեն հիմնավորել, թե վարկային պարտավորությունների խախտման պայմաններում հաշվարկված տուժանքի չափը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին, քանի որ դատարանը կարող է պակասեցնել տուժանքի չափը միայն այն դեպքում, երբ կպարզվի, որ խախտված է հաշվարկված տուժանքի և պարտավորության խախտման հետևանքների միջև ողջամիտ համաչափությունը:

Նման պարագայում 14.08.2014թ. դրությամբ հաշվարկված ժամկետանց վարկի գումարի նկատմամբ՝ 498000 ՀՀ դրամի և ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ 27256,5 ՀՀ դրամի չափով տույժերը /համապատասխանաբար 170548 ՀՀ և 6168,2 ՀՀ դրամով/ և մինչև պարտավորության լրիվ կատարման օրը հաշվեգրվելիք տույժի տոկոսները Առաջին ատյանի դատարանի կողմից պակասեցնելը Գերագույն դատարանը գտնում է անհիմն և ոչ իրավաչափ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ գործի նյութերը թույլ են տալիս կայացնել որոշում առանց գործը նոր քննության ուղարկելու, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում կիրառել Գերագույն դատարանի այն լիազորությունը, որը նախատեսված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Քանի որ վճռաբեկ բողոքում ստորադաս դատարանների դատական ակտերը վիճարկվում են հայցապահանջի չբավարարված մասով /504.168,3 ՀՀ դրամ/, իսկ Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքը բավարարում է միայն տույժերի գումարները պակասեցված մասով /176.716.2 ՀՀ դրամ և հաշվեգրվելիք տույժը/, ապա պետական տուրքի դիմաց Բանկի կողմից վճարված գումարները պետք է բռնագանձվեն պատասխանողներից՝ բավարարված հայցապահանջի չափին, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներում վիճարկված ու Գերագույն դատարանի կողմից բավարարված գումարներին համամասնորեն: Իսկ հակընդդեմ հայցի մասով՝ մերժման ենթակա լինելու պարագայում, դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1.«Արցախբանկ» ՓԲԸ ներկայացուցիչ Տ. Ավետիսյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն՝ վճարման ենթակա տույժի գումարի ակնհայտ անհամաչափ լինելու մասով, ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. հուլիսի 10-ի որոշումը բեկանել և փոփոխել:

«Արցախբանկ» ՓԲԸ-ի հայցը բավարարել մասնակիորեն: Էրիկ Մարտիրոսյանից և Ատոմ Մխիթարյանից համապարտության կարգով հոգուտ «Արցախբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 2.625.168,8 /երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար հարյուր վաթսուներեք ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, որից 2.000.000 ՀՀ դրամը՝ որպես վարկի գումար, 99.912,3 ՀՀ դրամը՝ վարկի գումարի նկատմամբ հաշվարկված ժամկետանց տոկոս, 498.000 ՀՀ դրամը՝ ժամկետանց վարկի նկատմամբ հաշվարկված տույժ, 27.256,5 ՀՀ դրամը՝ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկված տույժ:

Չվճարված վարկի գումարի /2.000.000 ՀՀ դրամի/ և վարկի գումարի նկատմամբ հաշվարկված ժամկետանց տոկոսագումարի /99.912.3 ՀՀ դրամի/ նկատմամբ հաշվարկել տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0.1 տոկոսի չափով՝ սկսած 2014թ. օգոստոսի 14-ից մինչև պարտավորության լրիվ կատարման օրը:

Հակընդդեմ հայցը մերժել:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. հուլիսի 10-ի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Էրիկ Մարտիրոսյանից և Ատոմ Մխիթարյանից համապարտության կարգով հոգուտ «Արցախբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել վճարված պետական տուրքի դիմաց 63.106 /վաթսուն երեք հազար հարյուր վեց/ ՀՀ դրամ, որից 52.503 ՀՀ դրամը՝ հայցադիմումի, 10.603 ՀՀ դրամը՝ վերաքննիչ և վճարել բողոքների համար: Հակընդդեմ հայցի համար վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ